

**ԾԱՎԱՐԾ ՆԱՐԴՈՒԻՆԻ**

## **ՓՈՐՁ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳՈՂՅԹԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՎ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**

Եբրայերենի մեջ բանաստեղծություն բառին համագործ բոլորովին տարբեր նշանակություն ունի հեղլենական առումն, զոր յուրացուցած են նվրոպական լեզուները և արդի հայերենն: Ասկից, մեր սխալ հասկացողությունը եբրայական բանաստեղծության մասին:

Ապօղոնի արվեստը նշանակող բառը հունարենի մեջ կնշանակէ ստեղծել, մինչ եբրայերենի մեջ՝

**ա. բաղդատել, խոսի նմանություններով.**

**բ. յօտել, կտրել, տաշել, նղկել:**

Այս երկրորդ սահմանումին մասին պիտի խոսինք վերջը, սակայն կուզեի անմիջապես այստեղ դիտել տալ, որ յօտել, կտրել, տաշել, նղկել, շատ կիշեցնեն մեր քերթել (և քերթված) բառը, (հունարենի մեջ դրամմա = գրել՝ կմատն մազաղաթներու վրա, քերելով ու քերթելով, մտածումը նշանակելու սովորությունը հիմներուն):

Գալով առաջին սահմանումին, ըստել թե եբրայերենի մեջ բանաստեղծություն բառին համագործ կնշանակէ բաղդատել, խոսի նմանություններով, փոքրիկ այլ թանկագին ծանոթություն մըն է, որ, ինձի կթվի թե, բավական է ներկայացնելու եբրայական արվեստին ամբո՞ղջ կարագիրը: Հայերեն Աստվածաշունչին մեջ սխալ և շատ գեղ թարգմանված է այդ բառը: Արդարն, ինչ որ առակ<sup>1</sup> թարգմանած են մերինները (Գիրք Հորա, Գլ. ԻՇ, 1, Սաղմ. Գլ. ԽԸ, 5), պետք էր պարզապես թարգմանվեր բանաստեղծություն (բաղդատելով ու նմանություններով խոսելու եբրայական արվեստը): Նոյնպես, ինչ որ առակարկու (Գիրք ԹՎոց, Գլ. ԻԱ, 27), թարգմանած են, պետք էր թարգմանվեր պարզապես բանաստեղծ: Բացեք բարբումի Զատոկ Քանի թարգմանությունը, և պիտի տեսնեք այդ բառերուն փոխադրությունը՝ կատարված ինչպես դիտել տվի: Արդարն, Հորի գրքին մեջ, որ ամբողջ բանաստեղծություն մըն է<sup>2</sup>, իմաստ ունի<sup>3</sup> ըստ «...յաելեալ Յորբայ յառակի իրում»: Կամ ի՞նչ կնշանակէ «բացից զառակս օրինութեան» (Սաղմ. Գլ. ԽԸ, 5): Ո՞վ բան կհասկնա «օրինութեան առակ» բացատրութենեն: Գրաբար Աստվածանշունչը, ծանոթության մը մեջ, նոյն բացատրությունը կթարգմանե «բացից քնարաւ զառեղծուածն իմ»: Ավելի գեշ, միթե առեղծվածնե՞ր կնվագեին քնարով, եբրայեցի բանաստեղծները\*: Մեր պատ-

<sup>1</sup> Եբրայեցիները բանաստեղծության զանազան ձևեր ունին, քիմա, մասմալ, միջթամ, շիկապճ, մասթի, միջմոր, թենհյիմ, որոնք առանձինն կնշանակեն նաև բանաստեղծություն:

<sup>2</sup> Ծանոթ ուզած են վերաբաստատել Հորի գրքին ձևը իբրև բանաստեղծություն: Մեր մեջ Թորգում արքեսպ. Գոլշակուն ևս տաղապահական ձև տված է Հորի գրքին:

\* [Առակը որպես բանաստեղծություն ներկայացնելու հետինակի պս ճիգերը հիմնագործ են, որը նաև հավաստվում է այս բառը գրաբարյան առակին համարժեքը ներկայացները դասական մոլու լեզուներով կատարված թարգմանություններում: Պարզապես առակը գրաբարում իմաստային շատ ավելի մեծ ընդգրկում է ուժեցել, բան ազօպա հազերենում: Նաև անթույլատրելի է գրաբարյան թարգմանության մասին պղպիսի ոճով ար-

վելիներուն աշխարհաբար Աստվածաշունչը պվեխ ևս հիմար թարգմանություն մը կկատարէ գրելով. «իսլամաբանության քարով պիտի բանամ»: Բնար բաղին գոյությունն իսկ պնոք էր ենթադրել տար թե խոսքը երգի կամ բանաստեղծության մասին է, և ոչ թե առաջի, առեղծվածի, իսլամաբության: Մանավանդ որ անմիջապես հետո տուն մը, երկու տուն երգ մը կմիշվի, (Զատոկ Քան այդ երգերը կթարգմանե բաժնելով հատվածնեն): Ուրիշ օրինակ մը, - կարգ մը սաղմուներ, որ կոչովին մասքի, զրաբար Աստվածաշունչը թարգմանած է իմաստություն, աշխարհաբարը՝ եղք: Այս մասքիլը այնպիսի երգ մը կամ բանաստեղծություն մըն է, որ բանահյուսված է համաձայն երրայական արվեստին ամենն մաքրու և ամենն գեղեցկագիտական օրենքներուն, այսինքն բանաստեղծություն մը, որ լավ տաշված է, լավ կտրված է, լավ հղկված է, և կմատնե բանահյուստողին իմաստությունը այդ արվեստին մեջ:

Այս սխալ թարգմանություններուն պատճառը նախ այն է, որ թարգմանիչները շփոթած են բանաստեղծության երրայերեն համագորին բառական իմաստնեն: Եվ հետո այն՝ որ բանաստեղծության մասին բոլորովին տարբեր էր ըմբռնումը, ինչպես երրայեցիներուն, նույնպես Հին Արևելքի ժողովուրդներուն, որոնք թաթախված էին ասորաբարեկական քաղաքակրթության մեջ: Հետևաբար, պատմության մշուշին մեջն լավող երգերն ու բանաստեղծությունները ուսումնասիրելու ժամանակ, պետք է մեկդի նետել հելլենական ու հոռվետական քաղաքակրթության Կշիռներն ու չափերը, և, անցնելով առաջ քան Աթենքի և Հռոմի աշխարհակալության թվականները, մտնել այն տարբեր աշխարհի, թեև հետո պարտված ու կործանած, որ ասորաբարեկական աշխարհակալության շրջաններուն, ժողովուրդներու իրերաթափանցման նոյն օրենքներուն տակ, ինչպես կայսերական քաղաքական կաթասաներու մեջ մեկ քաղաքակրթություն և մեկ արվեստ եր շիներ:

Չե՞ որ, ինչպես կպնդեն բոլորը, շատ հի՞՛ են հայ Գողթան երգերը, հնոկական դիցարանության հետ կապ մը պահելու աստիճան:

Եթե շատ հին են մեր Գողթան երգերու պատառիկները, ապա ուրեմն անոնք հյուսված են համաձայն այդ հին աշխարհին արվեստի օրենքներուն: ԱԲա թե ինչո՞ւ Էտուար Տ'որս կպնդեն թե ինչ որ հատկանիշը կկազմե երրայական բանաստեղծության, չեր կրնար սեփական ըլլալ միայն երրայեցի ժողովուրդին, այլ հասարակաց և ընդհանրակամ՝ Բարեկացիներուն, Աստրեստանցիներուն, Արաբներուն: Աստրական մշակույթին և երրայական զրականության հետ մեր խնամության մասին խոսելն առաջ, անհրաժեշտ է ուրեմն ճշտել երրայական բանաստեղծության Ակարագիրները, որ հասուկ էին նաև Ասիր առաջավոր ժողովուրդներուն:

---

տահալտվելը, վկապակուելով լոկ ժամանակակից մի թարգմանություն և մեկնարանություն:

Չեզամած այս ամենին, նպատակահարմար զտամք մեր ամսագրում վերաբատարակելու ոչ ալֆան հայտնի ապ հոդվածը իր լազ ընդգրկում ունեցող բանաստեղծական մի շաբք յուրօրինակ զուգահների և հայ զրականության վաղագում շերտերը վեր համեզու փորձի համար: ԽՄԲ.՝ Վ. Շնորհկյան:

\* \* \*

Երրայեցիմերը բանահյուսության առաջին պայման կհամարեն հիշողության ապահովումը: Բանաստեղծությունը քերնե քերան էր, որ կավանդվեր, ուստի հարկ էր միշոց մը գտնել բանահյուսությունը պահելու դարձ դարձ: Որպեսզի երգիչը անխալ և առանց տող մը մոռնալու կարենար երգել բանաստեղծությունը, օգտագործվեցավ Այրութենը: Այսպես քանի մը երրայերեն բանաստեղծություններ հյուսված կամ հորինված են այբուբենական կարգով: Բանաստեղծության մեջ ամեն տուն կամ որոշ թիվով տողեր կսկսեն նույնատառ բառով: Չեմ կրնար այստեղ հիշել երրայերեն բնագիրը, ուստի օրինակը կուտամ հայերենով: Ենթադրենք թե երգիչ մը երգեց.

### ***Երկմէր երկիմ և երկիր:***

Երկրորդ տողը կպարտավորվեր սկսելու Ե տառով կամ *Երկմէր* բառով.

### ***Երկմէր և ծիրամի ծով:***

Կամ թե երգիչը երգեց.

### ***Հնդ եղեգան փող՝ ծուխ եղանէր:***

Երկրորդ տողը կպարտավորվեր սկսելու Ը տառով կամ *Հնդ* բառով.

### ***Հնդ եղեգան փող՝ բոց եղանէր:***

Անշուշտ, դժվար էր միշտ հարգել այս օրենքը: Այս պատճառով, երրայական բանաստեղծության մեջ, քիչ են նման կտորները: Հիշենք Սաղմոն ՇԺԸ-ն, ուր, գրաքար Աստվածաշումաչին մեջ, գոված է նոյն տառով սկսող յուրաքանչյուր տուն մեկը մյուսեն հեռու: Երրայերեն Այրութենը կրաղկանա 22 տառն, այդ սաղմոսն ալ ունի 22 տուն, յուրաքանչյուր տուն՝ 8 տող, ուրեմն ամեն տունի մեջ նոյն տառը կրկնված է 8 անգամ: Այրութենական կարգով գրված է նաև Երեմիայի *Ողբերում* Դ. գլուխը, ամենը 22 տուն: Նոյն *Ողբերում* Գ. գլուխը ունի 66 տուն, այստեղ յուրաքանչյուր տուն կրաղկանա եղյակներն (երեք տողերն ալ նույնատառ սկսած են), և ամեն երեք տուն հաջորդաբար դարձալ նույնատառ:

Դիտեղով որ դժվար է միշտ հարգել այս օրենքը՝ դրված միայն ու միայն հիշողության մեջ պահելու համար բանահյուսական զանձը, երրայեցի բանաստեղծները փորձեցին կրկնել ոչ թե միայն տառը որոշ թիվով անդամներու սկիզբը, այլև կրկնել իմաստը որոշ թիվով անդամներու մեջ: Այսպես, երբ երգիչը երգեց.

### ***Երկմէր երկիմ և երկիր:***

Կպատրաստվեր երկրորդ անդամին մեջ ալ կրկնել նոյն իմաստը.

*Երկար եւ ծիրամի ժող:*

Ուրիշ օրինակ մը.

*Հնդ եղեգական փող՝ ծովս եղանէր:*

Երկրորդ անդամը կուգար կրկնելու նույն պատկերը, անշուշտ հառաջացնելով զործողությունը.

*Հնդ եղեգան փող՝ բոց եղանէր:*

Առնենք, Բինա, օրինակ մը երրայական բանաստեղծութենան.

*Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումնէ՞ երկեայց,  
Տէր ապաէ՞ն կեաց իմոց, ես յումնէ՞ դոդացայց:*

Այստեղ անմիջապես աչքի կցարնե զուգահեռականությունը: Արդարն, երրայական բանաստեղծության գլխավոր հատկանիշներն մեկն է զուգահեռական զարգացումը հուզումին, մուածումին և վերջապես քերթողական արտահայտության: Այդ զուգահեռականությունը կնշմարվի ոչ միայն երկանդամ, այլև երբեմն եռանդամ.

*Խաւարեսցի օրն այն,  
Եւ մի՛ խնդրեսցէ զնա Տէր ի վերուստ,  
Մի՛ եկեսցէ ի վերա նորա լոյս:  
Հնկալցի զնա խաւար եւ ստեր մահու,  
Եկեսցէ ի վերա նորա մէզ,  
Եւ զարմուդեցուացն զնա որ  
մթացուցանեն զտիւ:*

Այս զուգահեռականության մեջ հատկանշականն այն է, որ զուգահեռ անդամները իրարու կիամապատասխանեն ոչ միայն իմաստով, այլև ձայներով: Ահա, օրինակ մը, որ ցուց կըստա թե յուրաքանչյուր անդամի մեջ բառերը դրված են դեմ դիմաց, կարծես իբրև մտածման արձագանք.

*Տեառն է երկիր լրիւ իւրով,  
Աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա:  
Նա ինքն ի վերա ծովու հիմունա արկ նմա,  
ի վերա գետոց պատրաստեաց զնա:*

Առաջին անդամին մեջ երկիրը կիամապատասխանն երկրորդին աշխարհ բառին, երրորդին մեջ ծով՝ չորրորդին գետ բառին:

Ծիշտ ինչպես մեր Երկար երկին բանաստեղծության մեջ բառերն ու պատկերները իդարու արձագանք կուտան անդամներուն մեջ.

**Երկար երկին երկիր,**

**Երկար եւ ծիրամի ծով:**

**Հնդ եղեգան փող՝ ծովս եղանէր,**

**Հնդ եղեգան փող՝ բոց եղանէր,**

Ուսկի՞ց կծագի այս զուգահեռականությունը: Ըսինք թե ծագում կառնե Բիշողության անհրաժեշտ մեկ խաղեն: Այս երևույթը շատեր կրացատրեն նաև այլ ձևերով: Այսպես, մտածման արձագանքը, պատկերներու զուգահեռականությունը, խոսքերու կրկնությունը, ըստք ինչպես կուզեք, հասովկ է բոլոր նախնական ժողովուրդներուն, որոնց իմացականությունը կսիրե գաղափարներու զուգակցությունը: Էտուար Տ'որմ ուշադրությամբ կըննե Ծննդոց գիրքին խմբագրությունը և Կնշմարեն, որ նեղինակը միշտ զուգորդությամբ կմիշե բուսերը, կենադանիները և գաղափարները, - երկինք և երկիր, լուս և խավար, ցերեկ և գիշեր, ծով և ցամաք, չար և բարի: Հուզումն և մտածման օրորումը կրացատրվի նաև Բիշելով, որ, Երրայեցիներուն և Ասորեստանցիներուն մեջ, երգիչներու սովորություն ունեին զիրներ շրջապատողներուն կրկնել տալ իրենց ստեղծագործությունները տող առ տող: Այս ձևով կստեղծվեր կշռովք մը, որ, արձագանք տալով երգիչը պաշարողներուն հոգվուզ մեջ, կօրորեր զանոնք: Երևակայեցեք, որ հովիվներ էին երգիչները, - անոնք կկենային ժողովուրդին մեջտեղը, ճիշտ ինչպես իրենց ոչխարներու հոտին կեղրոնը, կերգեին ինչպես տուն կուտար Աերշնչումը: Ու ժողովուրդը կմասնակցեր, կրկնելով փոխասացությամբ: Նկատեցեք որ վաշկատուն կամ խաշնարած ժողովուրդներու մոտ տարօրինակ վարժություն մըն է խմբվի առաջնորդին շուրջը, պաշարել զայն, կախվի անոր շրթներեն: Այս վարժության հետքը կա անպայման սաղմոսասացության ավանդություններուն մեջ: Ինչպես օվասիսին մեջ, առվի մը եզերքը, ոչխարի հոտին կեղրոնը կանգնած հովիվ մը, այնպես ալ տաճարին մեջ, երգիչներու դասին կեղրոնը կեցած մոսիելը (Երրայերեն կնշանակե այն, որ կշռովք և չափ կուտա Աերշնչման, պարզ խորով՝ բանաստեղծ), կերգե և ժողովուրդը կճայնակցի փոխն ի փոխ: Երգեցողության այս ձևեն ծագում առավ դասն դաս փոխասացությունը. «Եւ երկոքին դասք երգեցողացն կացին ի տաճճ Աստուծոյ» (Գիրք Նէնս. Գլ. ԺԲ. 40):

Արդ, պահ մը դիտեցեք Ամանությունը, որ գոյություն ունի փոխին (սաղմոսներու տուններ) և զուգահեռ անդամներով բանահյուսության միջն:



Սկիզբները գրեցինք թե Երրայերենի մեջ բանաստեղծություն կնշանակե հղկել, յօտել (ինչպես ծառ մը), տաշել: Այս բացատրություններն իսկ կմատնեն, որ Երրայեցիներուն մոտ գոյություն ունեին տաղաչափական մասնավոր օրենքներ, որոնց վրա կձևեին ու

կկտրեին, կկաղապարեին ու կբնէկեին իրենց ստեղծագործությունները: Այդ ենթադրությունը ավելի ևս կզորանա, եթե Ակատի առնենք որ Եբրայեցիները բազմաթիվ բառեր ունին բանաստեղծական զանազան ձևերու մասին: Ասկից զատ, Սաղմոսներուն մեջ կբիշվին բազմաթիվ բառեր, որոնք կհաստատեն թե շատ որոշ օրենքներ կային երգելու, բնտևաբար բանահյուսեղու համար: Այսպես, գոյություն ունեին հատածներ, որ կճշտվեին աթնա (Աստվածաշունչի մեջ թարգմանված է հանգիստ) կոչված շեշտով մը: Դարձալ կային թէ ամի՞մ կոչված հշամեներ, որոնք կուգային շեշտել ոտանավորին անդամներուն վերջին բառերը, բաժնեղով տողը տողեն: Այս մասին երկար չպիտի խոսիմ, որովհետև այնքան բարդ հարց մըն է, որ երկու ճակատի բաժնված են ուսումնասիրողները. մեկ կողմը կը ներունի, որ երրայական բանաստեղծության մեջ գոյություն չունին տաղաչափական օրենքներ, ոչ այլ արտաքին ձևեր, իսկ մյուս կողմը կանեն թե երրայական բանահյուսությունը ուներ իր տաղաչափությունը, ինչպես իր արտաքին ձևերը: Մենք ցուց տվիմք իր արտաքին ձևերեն մեկ քամին,- այստեղ կուգենք ավելցնել թե երրայական բանաստեղծությունը ծանոթ էր նաև տուն կազմելու օրենքներուն: Եվ այս՝ եզրակացությունն իսկ է տողերու զուգահեռականության օրենքին: Արդարն, ինչպես տեսանք, եթե պատկեր մը կը կրկնվի երկու անգամով, տուն մը կազմվի: Երբեմն երեք անդամներու կրկնությունով է, որ կազմվի տունը,- և ահա ստեղծված է եռյակը: Այսպես եռեակներու գեղեցիկ օրինակ մըն է Երեմիայի Ողբերուն Գ. Գլուխը: Քաղյակները, կարելի է ըստ, անծանոթ էին երրայեցիներուն, եթե քաղյակը<sup>3</sup> ևս չիմարենք գումար մը երկու երկյակի:

Թե Եբրայեցիները որքան ծանոթ էին եռյակին, տանք քանի մը օրինակներ՝ քաղելով երրայական ամենահին բանաստեղծություններնեն.

*Զարթի՛ր, զարթի՛ր, Դերովրա,  
Զարթի՛ր, զարթի՛ր, խօսեա՛ երգով,  
Ցարո՛, Բարա՛կ, գերեա՛ զգերիս:*

Աստվածաշունչին մեջ տարբեր թարգմանված են այս տողերը, բայց ես կիևտկիմ ուղակի բնագրին վրայեն կատարված ֆրանսերեն թարգմանության մը: Հետևյալ հատվածին ուսանավորի ձևը թեև խաթարված է, բայց կմնան հատկանշական կրկնությունները.

*Ոչ ապաքէն գտանին, ո՞չ ապաքէն բաշխեն աւար,  
Աղջիկ մի, նա աղջկուն երկուս առ այր,  
Կապուտ երանցոց Ակարակերտ վասն Սիսարայ,  
Կապուտ երանցոց Ակարակերտ,  
Երանց երկուստեք Ակարէն,  
Նարու պէսպէս Ակարուց,  
Պարանոցին Առու կապուտ:*

Եվ Բիմա կարդացեք հետևյալը.

<sup>3</sup>Մ. Արենյան (Հայոց Լեզվի Տաղաչափություն, էջ 449) կոհիտն, որ պարսկական Քաղյակին մեջ երկու տողը կկազմեն մեկ բեյթ, երկու բեյթը՝ մեկ քայլակ:

Եւ բդիեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ,  
 Եւ եղէ շառալիդ յարմատոյ ամտի,  
 Եւ հազիցէ ի վերայ նորա հոգի Աստուծոյ:  
 Հոգի իմաստութեան եւ հանճարոյ,  
 Հոգի խորհրդոյ եւ օրութեան,  
 Հոգի գիտութեան եւ աստուծապաշտութեան:  
 Եւ բուրեսցէ երկիրի Տեառն,  
 Ոչ ըստ աչաց դատեսցէ,  
 Ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ:

Ի՞՞ԱՇ ԿԻՒԺԵՑԱՆԵ ՃԵԶԻ այս բանաստեղծությունը, - Երկնէր Երկի՞՞՛Ռ: Արդարն, մեր այս գեղեցիկ պատառիկն ալ կրաժնվի եռյակներու, բանալով նման ու զուգաթնուական պատկերներու տեսիլք մը:

Եռյակները այնքան լրիվ են և գեղեցիկ, որ Տոքթ. Սմբատ Գաբրիելյան դիտել կուտաթեն առաջին տունը կներկայացնեն երկունքը, երկորողը՝ ծնունդը, երրորդը՝ ծնալը:

Ոչ մեկ կասկած թե եռյակը շատ ծանոթ ձև մըն էր Բայ Ժողովրդական բանաստեղծության մեջ: Լեռ կկարծն թե Բեթանոսական ավանդություններն մնացած է Բետևալ երգը, զոր կերգնին Վասպուրականի մեջ նորապասակ հարսին ու փեսային առջև.

Էզ բարեն, այ էզ բարեն,  
 Էզմ արեւուն տանք բարեն,  
 Տայ թագաւորին շատ արեն,  
 Վահէ՛, Վահէ՛:  
 Էզ բարեն, այ էզ բարեն,  
 Էզ արեւուն տանք բարեն,  
 Տայ թագուհոյն շատ արեն,  
 Վահէ՛, Վահէ՛<sup>4</sup>:

Տոքթ. Գաբրիելյան դիտել կուտա, որ եռյակ մը կկազմն նաև Արտաշեսի երգը.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւուն Նաւասարդի,  
 Զվագելն եղանց եւ զվագելն եղջերուաց,  
 Մեք փող հարուաք եւ թմրկի հարկանէաք:

Եռյակի ձևն ունի նաև Արտաշեսի ամենքը.

Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս,  
 Զքեզ կալցին քաջը, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս,  
 Անդ կացցես, եւ զլոյս մի՛ տեսցես:

<sup>4</sup> Լեռ, Պատմություն Հայոց, Էջ 348:

Քանի մը օրինակներ ալ ՄԿրտիչ Նաղաշեն.

Թասերը չի մի,  
Կարմը ու գի մի,  
Չեզ անուշ լի մի:  
Չոր մէզէն համեղ,  
Գի մի է զօրեղ,  
Դուք անուշ արէք:

### Նաղաշ Հովհանքանեն

Սեղանը լի է ծաղիկ,  
Այսօր քամ ըզվաղը աղէկ,  
Գի մի խմէք, ծիծաղէք:  
Տէր ողորմեա՛, Տէր յիշեա՛,  
Կարմիր գի մի, սպիտակ շուշայ,  
Ուրախ կենամք համաշայ:

Երկու քաղյակ ալ Միքայել Սարկավագեն.

Արեւելք առաջին,  
Եւ արեւմուտք որ է վերջին,  
Նստեալ հայիմ դէմ փարչին:  
Եւ զանազան ի լի ֆռչին,  
Բարեխօսեա՛ մեծ կարասին,  
Որ զանազան ի գի մին:

Թե եռյակը անձանոթ չէր հին հայ գրականության, կվկայեն շարականներն ալ: Արդարու Բարեկն Կաթողիկոս կգոյն թե մեր շարականներուն պատկերները կազմված են երեք տուններով<sup>5</sup>:

Մյուս կողմէն Մ. Աբեղյան կհաստատեն, որ հայ ժողովրդական երգերը իրենց հասուն եռյակ մը ունին, հետևյալ ձևով.

AAA, BBB, CCC ...

Օրինակ մը.

Գացի արտօ, բռնի լոր,  
Աղջիկ տեսայ եալի ձոր,  
Նման էր կարմիր խնձոր:

<sup>5</sup> Մին, Հովհան-Օգոստոս. 1927:

*Արեւ դիպաւ սարերու,  
Կաքաւ թըրու քարերուն,  
Լորիկ կայմէ վեր դարուն:*

Թե մեր եռյակմերը բոլորովին տարբեր են այլ ժողովուրդներու եռյակմերն, կհաստատվի նաև քննելով ֆրանսիական եռյակմերը:

Ֆրանսիացիները ունին քանի մը տեսակ եռյակմեր, զլիավորները են՝

*Terza-Rima-Villanelle*

Առաջինը, զոր գործածած է Տաճթե, Բնուկալ ձևն ունի.

ABC,BDB,DED...

Այսինքն, առաջին տումին երկրորդ տողին հետ համգ կկազմնն հաջորդ տումին առաջին և երրորդ տողերը և հաջորդաբար: Երկրորդը, որ շատ չի գործածվիր, կկազմվի առաջին տումին առաջին և երրորդ տողերը կրկնելով, փոխն ի փոխ, հաջորդ տումներուն երրորդ տողին տեղ: Դիտել կուտաճը, որ Մ. Արենյան եռյակին AAA, BBB ձևը հայկական կհամարի՝ մեկմելով հանգավորման եղանակն: Այդ չե, սակայն, ինչ որ հայկական հատկանիշ մը կուտա եռյակին, որովհետև հանգը կրացակայի, ինչպես մեր անտումիներուն և հայրենմերուն, նույնական մեր բազմաթիվ եռյակմերուն մեջ: Արդեն հանգը նոր ձև մը ն է, միմեր չուտեին, - թեև Մյուուկերը կանդէ թե հոմերական բանաստեղծությունը հանգ կգործածեր<sup>6</sup>:



Այսպես, մին հայ տաղաչափության մեջ կենթադրենք երրայական ազդեցություն, - նույնիսկ շարականմերի մեջ: «Երբ դարեր ու դարեր ժողովուրդ մը գիշեր ցերեկ նոյն Ս. Գիոքը կորոնա և սիրտն ու միտքը նոյն սաղմոսերգությանց բանաստեղծությամբ կհամակի՛ միթե նժվար է հաստատել անոնց շարականմերու բանաստեղծական նույնությունը: Նման երրայական բանաստեղծության, մեր շարականմերը նոյն տաղաչափական արվեստով կրամահիյուսն: Չենք ալ գիտեր թե իմչո՞ւ այդպես կըլլան, քանի որ Գողթան երգերու բանահյուսությունը հար և նման էր երրայականին» (Միհրան Հովհաննիսյան): Ուրեմն, ինչպես մեր նախաքրիստոնեական, նույնական հետքրիստոնեական մեր տաղաչափական արվեստը կաշակերտեր Երրակեցիներին, Պարսիկներին, Արաբներին, և ոչ թե հունական-լատինական տաղաչափության: Առաջին անգամ, մին հայ տաղաչափության մասին խոսելով, Բագրատունի շեղեց այս հարցին քննության ընթացքը և այսուհետև բոլորը պարծեցան հայկական չափով մը, որ կուգար արևմուտքեն, և ոչ թե արևելքն: Բագրատունի կծիծաղեր, երբ Գր. Մագիստրոս կանդեր.

<sup>6</sup> L. Mueller, - Métrique grecque et latine, Trad. Francaise, Paris, 1882.

«Ի Հայում առաւել քան ի յունականին գտանեմք զտաղաշափական արուեստն, քանզի թեպես և Յոյնք զոտանաւորս ստեղծամեն զիտեղով զչափն, այլ ոչ կշիռն. քանզի յԱրաբցոց, ի Պարսից և յիսմայելականաց վարժեալ ենք ի չափ եւ ի կշիռ տաղից»:

Արդարն, արաբական տաղաշափության հատկանիշեր պիտի գտնեք մեր շարական ներուն մեջ, որոնք երբեմն գրված են իրեն մուվեաշշաղ, երբեմն իրեն մեսմենվի, Թիմվ, Մետի, Դաճըյո, և այլն: Վերջապես, շնորհիվ արաբական ուսումնեղու (Թիշենք Եվսատ, Փաթւե, Տենպեր, պերեվշան, րեմել, սեմա և այլն), «իմ երգն երածշտորն երգելի»: Այդ ուսումները կմնային մինչև Պապա Համբարձում, որուն աշակերտները, սակայն, լքեցին կարգ մը ուսումնեն:

Այո՛, մեր եկեղեցական բանաստեղծությունը ևս պետք է գտնվեր ազդեցության տակ արաբական Արուղին (տաղաշափության), իմշալես մեր նախաքրիստոնեական արվեստը՝ երրայեցի մոսինկմերու օրենքներուն: Ի՞նչ Բարկ վամկերուն սուլու ու երկարը բացատրել ամապլման լատինական ամանակով, չէ՞ որ սեմական արվեստը մեզի ավանդած էր ենգմը և մեսուտը:

#### Գ.

Այս ամենին կჩետեի, որ բանգիտություն մը կա մեր իմ բանաստեղծության և երրայնական բանաստեղծության միջև: Այս պարագան կնմթարեն ազդեցություն մը:

Փաստեր այդ ազդեցության. -

Ա. - Երրայնական արվեստը, իմշալես հայկականը հարկատու էին, կամ ժառանգորդ մեծ քաղաքակրթության մը, - ասորաբեղական մշակույթին: «Ժամանակակից արվեստը և զիտություն Առվան դարուն նման ոգին կրուն և Առվան դարուն մեջ ապրող ազգաց հասարակաց են, այնպես որ բանասիրությունը կրնա հայտարարել թեն մեր իմ տաղաշափությունը իմ ազգաց տաղաշափության հետ միևնույն սկզբանց Վրա Բիմնված էր»<sup>7</sup>:

Բ. - Մեր եկեղեցական երգեցողությունը, շարականներու ատեղծագործությունը առաջ, կրաղկանար երրայնական սաղմուներնը<sup>8</sup>:

Դ. - Եղիշե արքեպոս. Դուրյան կըսն, լատին Բեղինակի մը վկայության վրա Բիմնվելով, թե Հայերը մոտիկ հարաբերություն ունեն Երուսաղեմի հետ<sup>9</sup>:

Ե. - Վերջապես, իմշալես ցուց տվինք, մեր իմ գրականությունը, իմքն ալ կը կրաստառն թեն Ամանության շատ կետեր ունի երրայնականին հետ:

<sup>7</sup> Միթրան Հովհաննեսեան, Քմնական Պատմ. ԺԹ. դարու Դարրութեան, էջ 81:

<sup>8</sup> Բարգչն եպս., Հայոց Եկեղեցին Ե դարուն մէջ. էջ 16-21:

<sup>9</sup> Գ. Միթրաբեամի տեսակցութիւնը Եղիշէ արքեպոս. Դուրյան ինտ (Յուսաբեր, 4 օգ. 1927):